

ՔԱՋ ՍԱԳՈՆ

«Բարեկամությունն ու սերը քաղցր բաներ են, նոյնիսկ ներշնչումի աղբիւր. սակայն կ'երեւի միշտ չեն որ մարդը կ'առաջնորդեն ճշմարտութեան»:

Մեկնելով Անդրանիկ Ծառուկեանի խօսքերէն ու միաժամանակ «ներշնչում» Քաջ Սագոյի երբեմնի ողբերգական ըլլալու չափ, տխուր բարեկամութենէն, որ փոխանակ մնան ընտիր գինիի ժամանակի հոլովին հետ աւելի քաղցրանալու՝ դարձաւ քացախ, զոր ինք տակաւին կը շարունակէ խմել ու աւելի թթուիլ:

Կ'ուզեմ այստեղ թուղթին յանձնել տպաւորութիւններս, որոնք քառասուն տարիներէ աւելի ժամանակաշրջան մը կ'ընդգրկեն, տպաւորութիւններ՝ որոնք կ'արտաբերեն «մարդուկին» ԱՆՍԱՐԴԿԱՅՆՈՒԹԻՒՆը, տպաւորութիւններ՝ արտացոլացնող անոր մակերեսայնութիւնը ու վերջապէս անջնջելի տպաւորութիւններս անկէ՝ որ եղաւ ինքնախաբէութիւններու, կեղծիքի ու խաբէրայութիւններու անհատնում գումար մը. մէկը, որ շուկայիկ «չարչիի» մնան, մարդոց աչքերուն մէջ ուղիղ նայելով կը խաբէ զանոնք և ... տակաւին կը հիանայ ինքն իր վրայ:

Ան վարժ ըլլալով կեղծ ու ժամանակաւոր արժէքներու առթած գինովութեան, շարունակեց ըմպել իր հոգիի բաժակին յատակը մնացած քացախի մրուրէն ու դիրտէն և արբշիռ իր այծմու դիրքէն ու մանաւանդ շլացած իր նոր և ժամանակաւոր բարեկամութիւններէն, մոռցաւ իր անցեալն ու անտեսելով ոտնակոխ ըրաւ իր լաւ ու վատ օրերու հին բարեկամները, ընկերներն ու ծանօթները: Ան միշտ երախտագիտութիւնը իր ուսերուն վրայ նետուած ծանր բեռ մը նկատած էր, բեռ մը՝ զոր պատրաստ էր սիրով թօթափել իր վրայէն:

Սուտը ստեղծուած էր իրեն համար և ոչ թէ ինք՝ սուտին: Հակառակ յիսունի դռները ափ առած ըլլալուն, ան տակաւին կը յամառի ապրիլ իր ժամանակավրէպ մանկութեան մէջ. եթերային մանկութիւն մը, ուր միշտ ինքն է հերոսը, լաւը, դրականը, իմաստունն ու առաքինին: Ան ինքն իր մտքին մէջ անագիտ հերոս մըն է, երկնառաք հրեշտակ մը, որ

երկիրը բաւ չի համարեր իրեն, որովհետեւ մի քանի առիթներով Հայ անսեռ կուսակցութեան պատկանող մի քանի անհատներ մնանութեան եզր մը գտած էին իր և մեղա՛յ, անոր «երեց եղբօր»... Յիսուսի միջեւ: Ու այս բաւ էր որ իր գորտի աչքերուն մէջ կարդայիք անոր շուարած ու զարմացած արտայայտութիւնը, թէ ինչպէ՞ս երկնային «նամակատան պաշտօնեաները» փոխանակ զինք երկինք պահելու, սխալելով հասցուցած էին երկիր՝ սովորական մահկանացուներու մէջ:

Ըսուած է. «Հերոսները կը ծնին, բայց չեն մեռնիր», ու այդ սկզբունքէն մեկնելով մեր Քաջ Սագոն ամէն օր կը ծնի իբր նորօրինակ հերոս մը, նորանոր արկածախնդրութիւններով և քաջագործութիւններով, հերոս մը մնան իր անուանակից՝ Երազմաս Սուրբ Սարգիսին, որ ամենուրեք է և տէր ամէն կացութեան. ամենուն օգնող և ամենախրթին հարցերն ու դժուարութիւնները լուծող և հարթող, սակայն միշտ «համեստօրէն» գովասանքներն ու բարենիշերը վերապահելով իրեն: Իսկ թէ պատահի որ հարց մը ձախող ելք ունենայ, անոր պատրաստ յանկերգը կ'ըլլայ - լեզուին ծայրը վերի երկու ակռաներուն կռնակին քսելով, իբր թէ զարմացած - ըսել. «Յը՛, ես իրեն քանի անգամներ ըսի, բայց ինծի բնաւ մտիկ չըրաւ...»: Երբեմն ալ շեշտելու համար իր դիրքին կշիռն ու անձին հմայքը, ան կոկոզավիզ կ'ըսէ. «Չէ՛, այս անգամ ես շատ խիստ խօսեցայ իրեն», անշուշտ «իրեն»ը մեր մնան սովորական մահկանացու մը չէ, այլ թեւ տուէք ձեր երեւակայութեան:

Միացեալ Նահանգներ ոտք կոխած առաջին իսկ օրէն ան դարձաւ այդ օրերուն Արեւելեան Թեմի Առաջնորդին կրկնօրինակն ու մանկլաիկը միանգամայն, իրացնելով անոր նկարագրի խեռ գիծերն ու յատկանիշները միայն, որոնցմով այդ մեծաւորը առատօրէն շնորհաբաշխուած էր, այնքան մը որ մարդիկ սկսան մեր «Քաջ Սագոն» կոչել, ինչպէս Ամերիկացիները կ'ըսեն, անոր “Yes Man-ը կամ “Rubber stamp”-ը:

Ան տակաւին մանկութեանը փայտէ ձին չնստած, ճակատագրի մէկ խաղով նստաւ բախտի ձին, ինքզինք յանկարծ գտնելով Ամերիկայի Հայոց Թեմի առաջնորդական աթոռին թեկնածու և անոր աթոռակալը: Ու կ'արժէր լսել անոր 4-5 էջոց «ամփոփ» կենսագրականը, ուր անիրականն ու երեւակայականը աւելի տիրական էին քան թէ իրաւը, որովհետեւ

վերջինը շատ հակիրճ ըլլալուն միշտ ենթակա էր «անտեսուելու» լուրջ վտանգին: Եւ այդ մտացածին ու երեւակայական կենսագրականին մէջ միակ ճշմարտութիւնը, մեր հերոսին ... ծնունդն էր, մնացածը անպարկեշտ ու տխուր սուտերու քոսոտ տոպրակ մը, զոր ինք ցարդ հպարտօրէն վիզէն կախած անամօթաբար կը շրջի աշխարհի չորս ծագերը, մանաւանդ Հայրենիք՝ ծախելու իր անգոյ կարողութիւնները: Դժբախտաբար, ինչպէս միշտ կը պատահի պարիկներու հեքիաթներու մէջ, Ամերիկահայ մի քանի ծանծաղամիտ ջոջեր, տպաւորուած անոր առաջնորդական ընտրարշաւի ընթացքին ներկայացուցած կենսագրականէն, ուր մեր «հերոսը» իր գործունէութիւններու շարքին անհամեստօրէն կը ներկայացնէր իր «լաւապէս» տիրացած լեզուները, որոնց շարքին կ'իյնային Ֆրանսերէնը, Իտալերէնը, Գերմաներէնը, Արաբերէնն ու Եբրայերէնը, որոնցմէ ան հազիւ թէ կարենար Իտալերէն աղճատուած մի քանի նախադասութիւններ թոթովել, իսկ իր «գիտցած» լեզուներէն Հայերէնին և Անգլերէնին թող Աստուած հասնի: Սակայն, ինչպէս ժողովրդական առածը կ'ըսէ. «Որդնոտ բակլան իր կոյր գնորդը կ'ունենայ», նոյնպէս ալ մեր Ամերիկահայ եղբայրներն ու քոյրերը խաբուած մեծ «թիւճճարէն» (փերեզակէն) կուրաբար գնած են զինք, տակաւին հիանալով իրենց բախտին վրայ:

Հազիւ փառքը, դիրքն ու հեղինակութիւնը հեքիաթին երեք խնձորներուն մման ինկած իր զիրկը, ան դարձաւ այնքա՛ն անճանաչելի, որ յիշելով իր մանկութեան «թիւճճարութեան» (փերեզակութեան) օրերը, նոյնիսկ ծախեց իր երբեմնի մտերիմներն ու բարեկամները ... ի զին փոր մը հացի, ողբերգականը այն է, որ ինք իր անծալ ուղեղին մէջ միշտ մնաց գլխիվայր հասկցուած «*Եւնքի* զինուորը», տէրն ու պաշտպանը անոքներուն և տկարներուն:

Մեր Քաջ Սագոն ինքզինք «համեստօրէն» կը նկատէ աստուածատուր պարգեւը նախ՝ Հայ ժողովուրդին և ապա ամբողջ աշխարհին, քանի որ հայն ու օտարը հաւասարապէս կ'օգտուին իր «ծով իմաստութենէն», որովհետեւ ան իր ընտանիքի անդամներուն և անոնց հիւրերու ներկայութեան, ու մանաւանդ զինք մօտէն ճանչցողներու ... բացակայութեան, Քաջ Նազարեան ոճով, թեւ ու թռիչք տալով փշանի իր հիւանդկախ երեւակայութեան, մե՛ծ ոգւորութեամբ կը պատմէ թէ ինչ

գաղափարներ որ յայտնած էր «ամենակարող» Ռապալի Շ.ին, ան համաձայն գտնուած էր իրեն և թէ ինչպէս ան իր բազմակողմանի ձիռքերէն՝ համոզելը գործածած էր Հռոմի Սրբազան Պապը Հայաստան տանելու - միայն երեք ժամուան համար - այցելելու անկողնոյ ծառայող Հայոց Կաթողիկոսին, որուն համար ետքը Սրբազան Քահանայապետը իր երախտագիտութիւնը յայտնած էր այդ կէտը իր նկատողութեան յանձնած ըլլալուն: Կամ թէ ինչպէս ինք ամէն Հռոմ երթալուն միշտ Սրբազան Պապին կողմէ ճաշի պահուած է: Կամ ալ, ինչպէս Վատիկանի երբեմնի տիրական դէմքերէն՝ Տիւփրէ Եպիսկոպոսին, յաճախ ուղղութիւններ տուած է կարգ մը հարցերու շուրջ, և այսպէս շարքը երկա՛ր է իր «մեծագործութիւններուն», որոնք կրնան էջեր ու էջեր լեցնել:

Սակայն տեսնելու բան էր մեր «Հերոս»ին անմիջական պարագաներուն դէմքերու հիասքանչ արտայայտութիւնը, ի լուր այս մանրապատում ... սուտերուն և մանաւանդ անոր տիրամօր արդար հիացումը, հպարտութիւնն ու յաւիտենական յանկերգը. «Ա՛խ, *եսարում*, դուն ե՞րբ այսքան բան տրվեցար»: Իսկ այն օրերուն, երբ Վազգէն Հայրապետ վախճանած էր, հաւանաբար շատեր լսած ըլլան թէ ինչպէս մեր «Թիւճճար Սագոն» մի քանի ժամուան համար երկինք գացած էր ... միջնորդելու և համոզելու Ամենակարողն Աստուած, որ յաւիտենական հանգիստ և օթեան պարգեւէր հանգուցեալ Վեհին:

Այս անվարտիկ հերոսին սահմանափակ ուղեղը միշտ եթերին մէջ ըլլալուն, ան ինքզինքին համար ստեղծած է մտացածին աշխարհ մը՝ ուր սուտն ու փուտը իրար խառնելով, նորանոր դէմքեր և դէպքեր յերիւրելով սկսած է ապրիլ իր իսկ ստեղծած կերպարներով և պատահարներով, անշուշտ իր այդ ստեղծած կերպարներն ու դէմքերը միշտ շարժելով իր կամքին թելադրութեանց և ցուցմունքներուն համաձայն: Ու այսպէս, ժամանակը, պարագաներն ու պայմանները զինք դարձուցած են «միթոման» մը, մէկը՝ որ այլեւս դադրելով ուրիշին «անարուեստ» սուտերուն հաւատալ, սկսած է հաւատալ միայն ու միայն իր ստեղծած սուտերուն:

20-րդ դարու մեր Տոն Քիշորը կամ Քաջ Սագոն - այս վերջին վերանուանումը եղած էր դարձեալ իր մեծ հիացողներէն և մտերիմներէն մէկուն կողմէ, ներշնչուած Թումանեանի «Լոռեցի

Սագոն» պոեմային հերոսի մտատիպար՝ Քաջ Սագոյէն - յատկութիւն մը՝ որմէ մեր հերոսը բոլորովին գուրկ էր: Միակ դրական բանը որ կարելի էր տեսնել իր վրայ, այդ ալ անոր անթերի արտաքինն էր, ի հակասութիւն «Խլոտ Քաջ Նազարին», որովհետեւ ան իր հոգիի և մտքի փայլքը զիջած էր իր արտաքինին:

Հակառակ լայն շրջանակներու մէջ - մանաւանդ փափուկ սեռի ներկայութեան - անոր շաղակրատելու մեծ կարողութիւնը երբեմն տեղի կու տար «Վենետիկի Վաճառականը» երկի հերոսներէն՝ Պասսանիոյի լռակեացութեան, երբ ան կը դառնար իրա՛ւ «Ուրբաթախօս» մը, մանաւանդ երբ իր ընտանեկան պարագաներուն՝ հօրն ու եղբօրը հետ էր: Այս չխօսկան երրորդութիւնը սովորական մի քանի բառերու փոխանակումէն ետք կ'անցնէին իրենց նախասիրած նիւթին՝ ... լռութեան, ուր կրնային ժամերով նստիլ և իրար նայիլ երանաւէտ ժպիտ մը ուրուագծուած իրենց շրթներուն ծայրը, մերթ ընդ մերթ գլխու «Այո» շարժումով հաւանութիւն տալով մէկը միւսին ... չըսածին, և այսպէս կրնային ժամերով նստիլ ինքնագոհ և լուռ կերպով գաղափարներ փոխանակել իրար հետ: Պատահած է, որ ան երբեմնի բարեկամին հետ ճամբորդած ըլլայ, ու ճամբու ընթացքին անոր միակ արտայայտած խօսքերը եղած ըլլան «այո» կամ «ոչ»: Բայց արդար ըլլալու սիրոյն պէտք է աւելցնել թէ երբեմն ան կը ճոխացնէր իր բառամթերքը բարձրաձայն կարդալով խճուղիին երկու կողմերը գտնուող ծանուցումներն ու գովազդները ...: Ասոնք արդէն պէտք էր նկատել նախանշանները իր մէջ գլուխ բարձրացնող «մեծատութիւն» կոչուող ճիւղին, որով ան կ'ուզէր հասկցնել իր անցեալի ծանօթներուն, թէ ինք արժանի չէր տեսներ իր տարիներու ամբարած ...ՍՈՎ գիտութիւնը կիսելու իր «ստորադասներուն» հետ:

Այն օրերուն, երբ երանաշնորհ Վազգէն Հայրապետ անյոյս կերպով գամուած էր անկողնին, և ամէն օր ամէն կողմէ նորելուկ թեկնածուներ կը բուսնէին Հայրապետական գահին, մեր հերոսին վերջին մտերիմն ու հիացողը՝ Թափոր լերան Պետրոս Առաքեալի նման յափշտակեալ ներշնչումով պիտի յայտարարէր՝ թէ «Քաջ Սագոն» էր միակ յարմարագոյն անձը այդ պաշտօնին և դիրքին, մինչ միւս կողմէն մեր հերոսը - դարձեալ իւրայատուկ «համեստութեամբ» - ամենուրեք կը յայտարարէր թէ ... արդէն ժամանակէ մը ի

վեր ի՛նք էր որ կը վարէր Մայր Աթոռի գործերը, և թէ նոյնիսկ այդ օրերուն Հայաստանի Հանրապետութեան նախագահը զինք նկատած էր «միա՛կ արժանաւոր ու ցանկալի թեկնածուն» Կաթողիկոսական գահին: Սակայն ժամանակը եկաւ իրականութեան խարակներուն վրայ փշրելու բիւրեղեայ դղեակները ո՛չ միայն մեր «Քաջին», այլ նաեւ անոր հին օրերու մտատիպարին և մենտորին, այնքան մը որ ընտրութենէն ետք երկուքն ալ ծեծ կերած շուններու նման, պոչերնին առած իրենց ոտքերուն մէջ՝ հասան իրենց պաշտօնատեղիները:

Պիտի ուզեմ հոս վերջ տալ մեր հերոսին «Ազգային գործունէութիւնը» գլուխին, խոստանալով դարձեալ գրել - երբ հարկը զգացուի - իր կեանքի աւելի մութ երեսներու մասին, որոնք նոյնքան հետաքրքրական են որքան իր «կրօնա-ազգային գործունէութիւնը» մանաւանդ իրենց խելապատիկէն զարնուած և երբեք չմայրացած էգերուն հետ, որոնք զինք կը նկատեն - քսան դարեր վերջ դարձեալ մեր աշխարհը այցի ելած - ժամանակավրէպ՝ Յիսուս Քրիստոսը:

Ամերիկայի ազգային ջոջերը գտած ըլլալով իրենց ուզած և փնտռուած յարմար անձը, կրնան զինք լիովին գործածել (բառին ընդարձակ առումով) մինչեւ անոր կեանքի վերջալոյսը, և բարի վայելում իրենց:

Մինչ այդ կը սիրենք յուսալ և կը մաղթենք, որ օր մը Հայ ժողովուրդն ալ նոյն ճակատագրական սխալը չգործէ զինք Լուսաւորչի գահին բազմեցնելով, որովհետեւ մեր «Քաջի» պարագային միշտ աթոռն է եղած զինք արժեցնողը, զինք արժեւորողը և ոչ թէ հակառակը ...:

Ն.Վ.Մ.

Հիւսթըն, Թեքսաս, 1996

ՈՍԿԻ ԽՕՍՔԵՐ

**- ԵՂԲԱՅՐՍ ԿԸ ՍԻՐԵՄ, ԲԱՅՑ
ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ՝ ԱԻԵԼԻ՝:**



**- ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ
ԼԱԼԸ ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
ՍԵՃԱԳՈՅՆՆ Է:
(Յ. Պարոնեան)**